Ձերդ Գերազանցություն Վահագն Խաչատուրյանին
Հայաստանի Հանրապետության նախագահ
Մարշալ Բաղրամյան պողոտա 26/1,
Երեւան 0024,
Հայաստանի Հանրապետություն
Բրյուսել, 16 հունիսի 2023

Թեմա՝ Փաստաբանների նկատմամբ բռնություններ

Ձերդ գերազանցություն,

Ես գրում եմ ձեզ Եվրոպայի փաստաբանների և իրավաբանների միությունների խորհրդի (CCBE) անունից, որը ներկայացնում է 46 երկրների փաստաբաններին ու փաստաբանական միությունները, և նրանց միջոցով ավելի քան 1 միլիոն եվրոպացի իրավաբանների: Եվրոպայի փաստաբանների և իրավաբանների միությունների խորհրդը մեծ ուշադրություն է դարձնում մարդու իրավունքների և օրենքի գերակայության հարգմանը և հատկապես մտահոգված է ամբողջ աշխարհում իրավապաշտպանների իրավիճակով:

Եվրոպայի փաստաբանների և իրավաբանների միությունների խորհուրդը իր լուրջ մտահոգությունն է հայտնում Հայաստանում փաստաբանների նկատմամբ վերջին բռնությունների դեպքերի կապակցությամբ:

Մեզ հասած տեղեկությունների համաձայն՝ 2023 թվականի հունիսի 7-ին մի խումբ ոստիկաններ ծեծի են ենթարկել, խուզարկել և կալանավորել են փաստաբան Կարեն Ալավերդյանին՝ ՀՀ ՆԳՆ ոստիկանության Կենտրոն բաժնում՝ որպես փաստաբան իր օրինական գործունեությունը կատարելու կապակցությամբ:

Մասնավորապես, հաղորդվում է, որ փաստաբան Կարեն Ալավերդյանը, ով ներկայացել էր ՀՀ ՆԳՆ Ոստիկանության Կենտրոն բաժին ՝ իր պաշտպանյալին իրավաբանական օգնություն ցույց տալու նպատակով և փորձել էր կանխել ոստիկանության աշխատակիցների կողմից իր պաշտպանյալի խոշտանգումները, գետնին են գցել, ձեռնաշղթաներ հագցրել, ծեծի ենթարկել, ապա դեմքին փչել են արցունքաբեր գազին նմանվող նյութ: Մենք գիտենք, որ երբ փաստաբան Կարեն Ալավերդյանը մուտք է գործել ոստիկանության բաժին, ոստիկանները սկզբում խոչնդոտել են նրան հանդիպել իր պաշտպանյալին: Ի վերջո, երբ փաստաբանը վերջապես մտել է սենյակ, տեսել է, որ մի քանի ոստիկաններ ծեծում են իր պաշտպանյալին: Այն բանից հետո, երբ նա փորձել է միջամտել ի պաշտպանություն իր պաշտպանյալի, փաստաբանի նկատմամբ բռնություն է գործադրվել:

Ուստի, թեև հաղորդվում է, որ միջադեպի առնչությամբ ՀՀ ոստիկանությունը ներքին հետաքննություն է սկսել, Կարեն Ալավերդյանին մեղադրանք է առաջադրվել «խուլիգանության» և ոստիկանության օրինական գործողություններին խոչընդոտելու համար:

Մենք նաև գիտենք, որ սա միակ դեպքը չէ: Հաղորդվում է, որ փաստաբաններ Մարզպետ Ավագյանի և Էմանուել Անանյանի նկատմամբ ոստիկանության աշխատակիցների կողմից բռնության նման դեպք տեղի էր ունեցել նաև փետրվարին Երևանի մեկ այլ բաժնում:

Այս համատեքստում, Եվրոպայի փաստաբանների և իրավաբանների միությունների խորհրդը ցանկանում է Ձեր ուշադրությունը հրավիրել Փաստաբանների դերի վերաբերյալ Միավորված ազգերի կազմակերպության հիմնարար սկզբունքներին (կցվում է), Փաստաբանների գործունեության երաշխիքների մասին 16, 17 և 18 սկզբունքներին և խոսքի և միավորումների ազատության 23-րդ սկզբունքին:

Հաշվի առնելով վերոնշյալը՝ Եվրոպայի փաստաբանների և իրավաբանների միությունների խորհրդը խստորեն դատապարտում է վերոհիշյալ փաստաբանների նկատմամբ բռնության այս գործողությունները, և հորդորում է Ձերդ գերազանցությանն անել հնարավոր ամեն ինչ՝ ապահովելու այդ բռնության դեպքերի լիարժեք և անաչառ քննությունը՝ պատասխանատուներին միջազգային չափանիշներին համապատասխան պատասխանատվության ենթարկելու նպատակով: Ի լրումն, Եվրոպայի փաստաբանների և իրավաբանների միությունների խորհրդը ցանկանում է հիշեցնել, որ բոլոր փաստաբանները պետք է կարողանան կատարել իրենց մասնագիտական պարտականությունները՝ չվախենալով հաշվեհարդարից, խոչընդոտներից, ահաբեկումից կամ ոտնձգություններից՝ պահպանելու արդարադատության իրականացման և օրենքի գերակայության անկախությունն ու ամբողջականությունը:

Պանայոտիս Պերակիս